

ԼԵԶՎԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԳՐԱԿԱՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

ՀՏԴ 81'373.46

Հ.Յ. ՊԵՏՐՈՍՅԱՆ

**ՀԱՋՈՂՎԱԾ ՏԵՐՄԻՆԱՇԻՆՈՒԹՅՈՒՆԸ՝ ՏԵՐՄԻՆՆԵՐԻ
ԳՈՐԾԱԾՈՒԹՅԱՆ ԵՐԱՇԽԻՔ**

Յույց է տրվում, որ տերմինի լեզվականորեն սխալ կառուցվածքը կամ անհաջող թարգմանությունը կարող են խաթարել նրա իմաստային ճշգրտությունը, ըստ այդմ՝ պատճառ դառնալ նրա փոխառյալ համարժեքի արմատավորմանը:

Առանցքային բառեր. տերմինի իմաստային ճշգրտություն, կառուցվածքային համարժեքություն, տերմինային հոմանշություն, փոխառյալ տերմինի թարգմանություն:

Ներածություն: Տերմիններն ի հայտ են գալիս տերմինաշինության ճանապարհով, որի ուղիներն են՝ սեփական լեզվով տերմինակերտումը, փոխառյալ տերմինների թարգմանությունը և փոխառյալ տերմինների գործածությունն այնքան ժամանակ, քանի դեռ սեփական լեզվով չեն ստեղծվել դրանց հաջողված համարժեքները:

Տերմինը ևս բառ է, և հիմնականում նույնն են բառաստեղծման և տերմինաստեղծման գործընթացները [1]: Սակայն, ի տարբերություն բառի, որը կարող է ստեղծվել ինքնաբերաբար կերպով, տերմինը կոչված է՝ նշանակելու գիտական հասկացություն, ուստի նրա ստեղծման գործընթացը գիտակցված է: Եվ տերմինի հաջողվածությունն ու, հետևապես, նրա միանշանակ ու հաստատուն գործածությունը պայմանավորված են այնքանով, որքանով այն ճշգրիտ է արտահայտում հասկացության իմաստը և որքանով հաջողված է իբրև լեզվական կառուցվածք: Երբ տերմինի այս երկու կողմերից մեկը թերի է, ապա նրա գործածությունը երաշխավորված չէ. նման դեպքերում կամ ի վերջո հաջողվում է թարգմանել-կերտել այդպիսի տերմինների՝ սեփական լեզվով համարժեքները, կամ դրանք մնում են որպես բառարանային հարստություն:

Տերմինները հիմնականում ստեղծում են տարբեր բնագավառների մասնագետները: Սակայն մասնագետը, հետամուտ լինելով բառային տեսքով տերմինի իմաստային կողմի նշանակմանը, միշտ չէ, որ տիրապետում կամ պահպանում է սեփական լեզվի բառակազմության օրինաչափությունները: Մինչդեռ լեզվական կողմի խաթարումն անպայմանորեն խաթարում է նաև հասկացության իմաստային ճշգրտությունը [2]: Այստեղ է, որ ստեղծվում են հասկացության իմաստը ճիշտ չարտահայտող, լեզվականորեն խաթարված, անհաջող

տերմիններ, և անխուսափելի է լինում վերադարձը դրանց փոխառյալ համարժեքներին [1]:

Քննվում են երկրորդ «Ռուս-հայերեն պոլիտեխնիկական բառարանում» [3] լեզվական նկատելի խաթարումներով տերմինները՝ իրենց իմաստների ճշգրտության տեսանկյունից, անհրաժեշտության դեպքերում համեմատելով դրանք նաև առաջին «Ռուս-հայերեն պոլիտեխնիկական բառարանի» [4] տերմինների հետ: Քննության են ներկայացվում տերմիններ հիմնականում մեքենագիտական-մեքենաշինական տերմինահամակարգերից [5]:

Բայց մինչ քննությանն անցնելը՝ փաստենք, որ վերոհիշյալ երկրորդ բառարանում առկա են տերմինների բազմահազար հայերեն համարժեքներ, որոնք խիստ հաջողված են, լայնորեն կիրառվում են գիտական լեզվում, ավելին՝ վաղուց արդեն դարձել են հայոց լեզվի բառապաշարի անկապտելի մասը՝ թափանցելով նաև խոսակցական լեզու [6]:

Միաժամանակ՝ բառարանում տեղ են գտել նաև անհաջող տերմինակերտումներ, տերմինների անստույգ թարգմանություններ և անհամարժեք պատճենումներ, բառարանը ծանրաբեռնված է անհարկի, չարդարացված հոմանիշ տերմիններով, հատկապես հայերեն-օտար կրկնակներով, որոնցից հաճախ նախապատվությունը տրված է օտար համարժեքին: Ի թիվս այլ իրողությունների՝ սա ևս պատճառ է, որ մինչև այսօր էլ գիտատեխնիկական մասնագիտական և ուսումնական գրականության մեջ դժվարությամբ են արմատավորվում հայերեն համարժեքները [7]:

Տերմինների քննության արդյունքները: Բառարանից բառարան տերմինների հայերեն համարժեքների համեմատական քննությունը [8] թույլ է տալիս կատարել դրանց հետևյալ դասակարգումները՝ ըստ երկրորդ բառարանի.

1. Տերմիններ, որոնք հաջողված են հասկացության իմաստի ճշտության և բառային կառուցվածքի տեսանկյունից, միանշանակ գործածվում են գիտական և ուսումնական գրականության մեջ. օրինակ՝ *անցյալից ավանդված արհեստագործական գործիքների կամ մարմնի մասերի անվանումների վերադարձնաճանաչմանը մեքենագիտական-մեքենաշինական տերմինաբանության մեջ* [5] և այլն:

2. Տերմիններ, որոնց իմաստային, հետևապես՝ նաև գործածության սահմաններն ընդարձակվել են նախորդ բառարանի համեմատությամբ. *առանցք//տնի, աստղիկ//աստղանիվ, արամնանիվ//ժանանիվ, գոգ//գոգավորություն, իջվածք, թրթում// տարանում* և այլն:

3. Տերմիններ, որոնց իմաստային սահմանը նույնն է, ընդարձակվել է գործառության տիրույթը. *առանցք-, ազդանշան-, ալիք-, աղմուկ-, անիվ-, անկյուն-* և այլն:

4. Տերմիններ, որոնք ժամանակի ընթացքում առաջին բառարանի [3] համեմատ վերանայվել-ճշգրտվել են. *երկճյուղություն, երկճյուղավորում*-երկատում, ճյուղավորում. *խաղ-խաղացք*-բացակ. *ուռածություն//փքվածություն*-փնջվածք, *հեղազդեցություն*-հետցատկ և այլն:

Երկրորդ բառարանը [2], ըստ փոխառյալ տերմինների և դրանց հայերեն համարժեքների (թարգմանությունների) առկայության և գործածության, ընդգրկում է.

1. Տերմիններ, որոնք թարգմանվել են, և որոնց թարգմանությունները գործածվում են. *аккомодация-հարմարեցում, дифуркация-երկատում, вибрация-թրթռում, ушарանում, компланарный-հարթ, համահարթ, мембрана-թաղանթ, нуль-վահանակ, сателит-մոլորակային արամանիկ, стабилизатор-կայունարար, фиксатор-սևեռիչ, эффективность-արդյունավետություն, фибр-թելք, компонент-բաղադրամաս, фильтр-զտիչ, систем-համակարգ* և այլն:

2. Տերմիններ, որոնց թարգմանություններն առկա են, սակայն չեն գործածվում կամ գործածվում են մասնակիորեն, թեև դրանց թվում ակա են նաև խիստ հաջողված հայերեն համարժեքներ. *амортизатор-մեղմիչ, մարիչ, ամորտիզատոր, анализатор-վերլուծիչ, անալիզատոր, баланс-ճոճանիկ, հավասարակշռունակություն, բալանս, ցироскоп-հոլակ, գիրոսկոպ, декремент-նվազանք, դեկրեմենտ, демпфер-հանդարտիչ, մարիչ, դեմպֆեր, диаграмма-տրամագիր, դիագրամ, дивергенция-տարամիտում, ճյուղավորում, դիվերգենցիա, дрейф-տեղաշարժ, փոփոխություն, դրեյֆ, зонд-միսան, զննածոդ, զոնդ, эффе́кты-երևույթ, արդյունք, ազդեցություն, էֆեկտ, импеданс-լրիվ դիմադրություն, իմպեդանս, импульс-մղում, ազդակ, իմպուլս, инверсия-հակադարձում, շրջում, կարգափոխում, ինվերսիա, лимб-բաժնօղակ, լիմբ, контур-ուրվագիծ, եզրագիծ, կոնտուր, конфигурация-ուրվագիծ, եզրածև, փոխդասավորություն, կոնֆիգուրացիա, манипулятор-ձեռնանմանակ, մանիպուլյատոր, мениск-մակակրողություն, ծնկահողի մահիկ, մենիսկ, модель-նմուշօրինակ, ձևանմուշ, մանրակերպ, նմանակ, մոդել, модуль-թվի մեծություն, գործակից, պայմանական միավոր, սարքի հանգույց, մոդուլ, нормал-ուղղահայաց, նորմալ, нутация-առանցքածոճ, նուտացիա, портал-ճակատամուկ, պորտալ, процессия-կոնսպարույտ, պրեցեսիա, сервомеханизм-օժանդակ մեխանիզմ, սերվոմեխանիզմ, ցикл-բոլորաշրջան, պարբերություն, ցիկլ, октава-ութնյակ, օկտավ, ферма-կառուցարար, ֆերմա, функция-գործառույթ, ֆունկցիա, тангенциальный-շրջափողական, տանգենցիալ, виртуал-հնարավոր, վիրտուալ, сферически-գնդաձև, գնդոլորտային, սֆերիկ և այլն:*

Սրանք բավականին շատ են, քանի որ իր ժամանակի համար այնպիսի մի խոշոր երևույթ, ինչպիսի երկրորդ պոլիտեխնիկական բառարանն է, հայերեն

համարժեքների հետ հանձնարարել է նաև դրանց փոխառյալ ձևերը՝ համարելով դրանց վերջնական ընտրությունը ժամանակի խնդիր: Բայց եթե այս մոտեցումն արդարացված էր առաջին պոլիտոխնիկական բառարանի շրջանում, ապա երկրորդի ժամանակ դրա անհրաժեշտություն չկար [6]: Այս է պատճառը, որ այսօր էլ շատ մասնագետների կողմից բառարանում հայերեն համարժեքներին զուգահեռ փոխառյալների գոյությունն ընդունվում է որպես նորմ:

3. Փոխառյալ տերմիններ, որոնք չունեն թարգմանություններ և գործածվում են փոխառյալ տեսքով [8].

ա) Լիակատար փոխառություններ. *азимут–ազիմուր, динамика–դինամիկա, кинематика–կինեմատիկա, механизм–մեխանիզմ, машина–մեքենա, механика–մեխանիկա, момент–մոմենտ, потенциал–պոտենցիալ, ротор–րոտոր, скаляр–սկալյար, статика–ստատիկա, тензор–տենզոր, автомат–ավտոմատ* և այլն:

Սրանց մի մասը մաթեմատիկայից կամ ֆիզիկայից մեխանիկային և մեքենագիտությանն անցած լիակատար փոխառյալ տերմիններ են, որոնք արդեն իսկ յուրացված են իրենց մայր գիտությունների շրջանակում. *аксидент–աքսիդ, градиент–գրադիենտ, энциклоид–էպիցիկլոիդ, эволюта–էվոլյուտ, эвольвента–էվոլվենտ, координаты–կոորդինատներ, вектор–վեկտոր, тор–տոր, тороида–տորոիդ, циклоида–ցիկլոիդ* և այլն:

Սրանք հազվադեպ են թարգմանվում՝ *զլորոիդ–գնդածև, գնդարդ, ցենտրոիդ–կենտրոնարդ*:

բ) Կիսափոխառություններ. կառուցվում են հետևյալ կերպ.

Ածանցմամբ՝ հայերեն ածանցների և օտար արմատի/բառի, կամ հակառակը՝ օտար մասնիկի և հայերեն բառի համադրությամբ. *անդրահարմոնիկ, գերհարմոնիկ, ենթահարմոնիկ, հակառեզոնանս, էկզոկմախք, էնդոկմախք, մեխանիկական, պարամետրական, կոնական, իզոմետրական, իներցիական, սիներգիական, դինամիկական, անալիզարար, անիզոտրոպություն, զլորոիդային, մանկրայնություն, կոմպլեքսային, կուլիսային, կարդանային, ցիկլային, իմպուլսային, բազային, ռեզոնանսային, ակտիվացում, դեֆորմացում, մանիպուլացում, մոդուլացում, դիսյուլացում, պլաստիկություն, իզոտրոպություն, իզոտրոֆություն, ավտոմատորեն, ստատիկորեն, հիստերեզիսորեն, էնգլիլիձև, կարանգիաձև, էպիցիկլարդ, էլիպսարդ, հիպերբոլարդ*. այս վերջին երեք կիսափոխառությունները, սակայն, չեն գործածվում:

Ածանցմամբ կիսափոխառություններն առավել հաճախադեպ են՝ պայմանավորված ինչպես ածանցների համակարգող հատկությամբ, այնպես էլ տերմինների իմաստաբանական առանձնահատկություններով հատկապես տերմինից ճյուղավորումներ ստեղծելիս:

Բառաբարդամբ և բարդածանցմամբ. օտար արմատի//բառի և հայերեն արմատի//բառի միջոցով կամ հայերեն արմատների ու ածանցների և օտար արմատների համադրությամբ. *ինտերֆերաչափ, իդիոշարժում, նեյրոցանց, ամպլիֆուդահաճախականային, ամպլիֆուդառեզոնանսային, իզոկինետրիկական, ինքնապարամետրական, լիասպեկտրային, հիպերսֆաֆիկական քվազիհոդակապային, քվազիէվոլվենտային, փուլառեզոնանսային* և այլն:

Կիսափոխառությունները, որոնք որոշակի չափով մեղմում են լիակատար փոխառությունների անհարկի գործածությունը պատկերը, անհամեմատ շատ են հատկապես երկրորդ պոլիտեխնիկական բառարանում: Դրանցով կազմված են գլխաբառ տերմինների ճյուղավորումները:

Տերմինների հայերեն համարժեքների արմատավորմանը խոչընդոտում է նաև դրանց հայերեն հոմանիշների առկայությունը: Հոմանիշությունը նկատելի է հատկապես ներհամակարգային նույնանշությամբ և համանշությամբ [1].

1. Ներհամակարգային նույնանշությունը դրսևորվում է նույն տերմինի հայերեն-հայերեն և հայերեն-փոխառյալ կրկնակների տարատեսակներով:

- Տերմինների հայերեն-հայերեն կրկնակներ.

ա) գոյականի սեռական հոլովով և ածականական կրկնակներ. *ամբարձիչի//ամբարձիչային//ամբարձիչավոր, առեղի//առեղային, առանցքակալի//առանցքակալային, խուղակի//խուղակային* և այլն.

բ) ածականակերտ ածանցներով կրկնակներ՝ *արտակենտրոնավոր/արտակենտրոնային, թրթռավոր//թրթռական//թրթռային, բռնցքավոր//բռնցքային* և այլն.

գ) *ածականի ածանցավոր և անածանց կրկնակներ՝ ակոսահան՝/ակոսավոր, արտակենտրոն՝/արտակենտրոնական, երկբունցք՝/երկբունցքավոր, երկծունկ՝/երկծնկավոր, գազածուծ՝/գազածծիչ* և այլն.

դ) նույն արմատի՝ ածանցով կամ այլ արմատով համադրված կրկնակներ՝ *ամրակում//ամրակապում, ակոսափաշվածք՝/ներփաշվածք, արգելաձողիկ՝/արգելաչորսու, արտածգում//արտածգվածք,բազմամուտք//բազմընթաց, բեռնում//բեռնվածք, բեռնավորում//բեռնվածություն//բեռնվածք, գերավազք//գերապտույտ, ինքնակենտրոնավորում//ինքնակենտրոնադրում, լարք//համալարք, ինքնադատարկիչ//ինքնաբեռնաթափիչ, ինքնընթաց//ինքնագնաց, կանգառ//կանգառում//կանգառք, կախոց//կախվածք//կախում, հորատակալ//հորատաբռնիչ, տակադիր//տակնոց* և այլն:

- Տերմինների հայերեն-փոխառյալ (լիակատար և մասնակի) կրկնակներ. *աերոդինամիկա//օդադինամիկա, անոմալիա//անկանոնություն, անիզոտրոպիա //անիզոտրոպություն, արմատոր//արման, արսիոնոմետրական-առանցքաչափա-*

կան, բայխստիկա//ծգաբանություն, բայպաս//կողանց, գլոբոիդ/գնդարդ, դեսոր-բեր//կլանվածքազարիչ, դեֆորմացիա//ձևափոխություն, դիսբալանս//հավասարակշռախախտում, դոռն//միջուկ, կուլիս//սահալծակ, էլևատոր//սորամբարձիչ և այլն:

2. Ներհամակարգային համանշտությունը դրսևորվում է որպես նույն իմաստի արտահայտում տարբեր տերմիններով. *ակ//անցք, ակոսավոր//մալոնեքավոր, ակոսիկ//առվակ, ակոսալ/պարուրակ, անջրպետ/միջակապ, առբերում//մուրեցում, արգելուկ//ապամանիկ, արտանետում//շեղում, բեկվածք/կոտրվածք, բեռ//ճանրոց, բերում//մուրեցում//մուրեցնելը, գայլիկոն//շաղափ, գործասեղան// դազգահ, դարակ//մահճակ, եզրածածկ//մակադիր, երկծղի//եղանածև, թաթ// ճանկ// կեռ, թրթռիչ//պապանակ, թործում//փորում, խարտակցում//սղոցակցում, լիսեռ//գլան, կափույր//փական, կարապիկ//ծիծեռնիկ և այլն:*

3. Տարբեր հասկացություններ թարգմանված են միևնույն տերմինով՝ առաջացնելով համանունություն, որը շփոթության տեղիք է տալիս. *остановка//выстой–կանգառք, резеу//рубилка–կրրիչ, резание//отрезка//որոքեզ/սրեզ–կտրում, агрегат//соединение–միացք, бородок//пробойник–անցքահատ* և այլն:

Սակայն տերմինների չգործածվելու այլ օրյեկտիվ պատճառներ էլ կան [9]՝ իմաստային տեսանկյունից թերի կամ անհաջող, գործածության առումով անհարմար, կամայական տերմինների կերտումը. *ամպլիպտոդ–լայնույթ* (եթե մաթեմատիկայում ամպլիտուդը լայնույթն է, ապա ֆիզիկայում, մեխանիկայում և մեքենագիտության մեջ այն գիտակցվում է որպես է տատանման թափ. իմաստ, որն արտացոլված չէ հայերեն համարժեքում. *գրաֆիկ–գծարկ* (գրաֆիկը միայն գծերը կամ գծվածքը չեն, առավել կարևոր են նրանում պարունակվող թվային կամ բառային տեղեկությունները), *դիագրամ–տրամագիր* (դիագրամն առավելապես ներկայացվում է երկրաչափական պատկերների տեսքով, ինչը չի արտահայտում տրամագիր բառը), *պրոֆիլ–տրամատ* (այս բառը կառուցվել է հայերենի բառակազմության սկզբունքների աղավաղմամբ՝ տրամ- նախածանցով և -ատ վերջածանցով. բառն արմատ չունի), *դրագ–հողահան* (դրագ սարքով միայն հող չէ, որ հանում են ընդերքից կամ ջրային տարածքից), *սրորոքոսկոպ* պարբերադիտակ (չի հասկացվում պարբերությունը դիտելու, թե՞ պարբերաբար դիտելու սարք), *պարաշույր–անկարգել* (թարգմանությունը չի ապահովում «անկումից պաշտպանող հարմարանք» իմաստը), *նեգատիվ–ժխտանկար* (նեգատիվը նկարի ժխտումը չէ) և այլն:

Տերմինները պետք է կենսունակ լինեն համակարգում տերմինային նոր ճյուղավորումներ ստեղծելիս: Այս առումով թերի է, օրինակ, հետևյալ թարգմանությունը. *հելիոփորագրություն//լուսափորագրություն, հելիոստատ, հելիոպրոն, հելիոգրաֆ// արևագրիչ, արևահամակենտրոնիչ, արևախոհանոց* և այլն:

Մասնագետներին ոչինչ չեն ասում նաև *ազրեգալ-միացք, բիեֆ-ջրամաս, դիաֆրագմա-խտրոց, գորբի-խտրակ, պորտալ-դարպաս, պարամետր-հարաչափ, պրոյեկտիվ-առաջաձգական, սպեկտր-լուսակ, սեզմենտ-բացահայտ* և բազմաթիվ այլ թարգմանություններ:

Արմատների կամ արմատի և ածանցի անհաջող միասնությամբ ստացվել են արհեստական, տերմինների իմաստը լիակատար չդրսևորող, հայեցի լեզվամտածողությանը խորթ կառուցվածքներ. *կանգաշարժ, նեղամաս, մետաղացայտ, անջալոց, անէջք, անմնացք, արգելուկ, եռուցք, կանգառում, կիսան, հավաքորդ, հավաքոց, թոխչքարան, երկարիչ, հաղորդանք, ցամաքուրդ* և այլն:

Անբարեհունչ են նաև *ծայրոց, մրոց, խրոց, հոպնակ, տափուկ* և նման այլ թարգմանությունները:

Այս ամենով հանդերձ՝ մասնագետների հիմնական ուղեցույցը դեռևս այս բառարանն է:

Գիտության անկասելի զարգացման արդի պայմաններում այս իրավիճակը կարող է խոչընդոտել առանձին տերմինահամակարգերի զարգացման ընթացքը, խաթարել սեփական լեզվով տերմինաշինության գործընթացը: Իրավիճակը կարող է շտկվել՝ տերմինների ստեղծմանը ներկայացվող պահանջների խստիվ պահպանմամբ: Դրանք են. տերմինի մենիմաստություն, կոնտեքստային իմաստների բացառում, տերմինից ճյուղավորումներ ստեղծելու համակարգային հատկանիշների ապահովում, տերմին-հոմանիշների բացառում, սեղմություն կամ տերմինային կաղապարի կարճություն, տերմինի հուզական երանգի բացակայություն և բարեհնչության ապահովում [10]: Հակառակ դեպքերում արդարացիորեն նկատվում է վերադարձ փոխառություններին:

Եզրակացություն: Ամփոփելով վերն ասվածը՝ կարելի է ընդհանրացնել, որ հայերեն գիտատեխնիկական տերմինաբանության զարգացման հիմնական ուղին եղել և մնում են հայալեզու գիտական և ուսումնական գրականության ստեղծումը, տերմինների՝ գիտական հիմունքներով բառարանագրումը: Սա պարտավորեցնում է պահպանել տերմինակերտմանն ու տերմինների թարգմանությանը ներկայացվող պահանջները, որոնք բխում են են տերմինների հատկանիշներից:

Երկրորդ «Ռուս-հայերեն պոլիտեխնիկական բառարանում» առկա և աշխատանքում քննված ու չքննված նման շատ այլ թարգմանություններն ու տերմինակերտումները պետք է առանձին-առանձին վերանայվեն մասնագետների և լեզվաբանների համագործակցությամբ:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Պետրոսյան Հ.Ց., Տերմինագիտության հիմունքներ, Դասագիրք, Ե., 2010:
2. Лейчик В.М., Терминоведение: предмет, методы, структура. Изд-е 2.- М., 2006.
3. Ռուս-հայերեն պոլիտեխնիկական բառարան /Ջ. Հացագործյան և ուրիշ., Ե., 1988:
4. Ռուս հայերեն պոլիտեխնիկական բառարան /Ռ. Ախշարումով և ուրիշ., Ե., 1957:
5. Պետրոսյան Հ.Ց., Հայերեն մեքենագիտական և մեքենաշինական տերմինների իմաստաբանական-կառուցվածքային և գործառական վերլուծություն. Թեկն. Ատենախոս., Ե., 2007, 157 էջ:
6. Սուքիասյան Ա., Սովետական շրջանի հայերեն տերմինաբանական և մասնագիտական բառարանների դերը հայ գիտատեխնիկական տերմինաբանության մշակման գործում /Հայոց լեզու և գրականություն. Գիտ. աշխ. ժող., Ե., 1988, պրակ 9-10:
7. Гринев С.В., Основы лексикографического описания терминосистем: Дис. док. фил. наук.- М., 1990.
8. Պետրոսյան Հ.Ց. Գիտատեխնիկական փոխառյալ տերմինների գործածությունը հայերենում. Հանրապետական գիտաժողով՝ նվիրված Խաչատուր Աբովյանի անվ. ՀՊՄՀ հիմնադրման 100-ամյակին (Ե., 23-24 հունիսի, 2022թ.) Հանրապետական գիտաժողովի նյութեր, Ե., 2022:
9. Պետրոսյան Հ.Ց., Հայերեն գիտատեխնիկական տերմինաբանության զարգացման և բառարանագրման արդի հիմնահարցեր//ՀԱՊՀ Բանբեր. Մեխանիկա, մեքենագիտություն, մեքենաշինություն, հ. 2, Ե., 2024, էջ 9-40:
10. Աղայան Է., Տերմինագիտություն. Դասախոսություն, Ե., 1978:

H.Ts. PETROSYAN

SUCCESSFUL CREATION OF TERMS AS A TERM APPLICATION GUARANTEE

It is shown that an incorrect linguistic structure (or translation) can deteriorate the semantic accuracy of a term, at that causing the strengthening of the borrowed equivalent.

Keywords: borrowing, term translation, semantic accuracy, structural equivalence, term application.

А.Ц. ПЕТРОСЯН

ТЕРМИНОСТРОЕНИЕ КАК ГАРАНТ ПРИМЕНЕНИЯ ТЕРМИНА

Показано, что лингвистически неправильная структура (или перевод) может исказить смысловую точность термина, став таким образом причиной укоренения его заимствованного эквивалента.

Ключевые слова: заимствование, перевод термина, смысловая точность, структурная эквивалентность, применение термина.